ՅԲ.

Վասն Ֆրա մարթին պատմագրին ծանիք, զի ես աստ որոնեալ գտի գիրք մի իտալերէն՝ որ պատմէ զկեանս պապուց. և ի քննելն զստութիւն պատմութեան յօհաննու ութերորդի կին հռչակելոյ՝ գտի զՖռաթն զայն հնարիչ այսր ստութեան, ըստ նմին և այլ բազում ստութեանց։ Անուն այսր պատմաբանի տարալուծմամբ բերի ի յակոբայ. իսկ ի գիրս անդ գրի Marciello polacco Religioso di castelo penitentier չորրորդ ինոովկենտիոսի։ Զհեղինակութենէ սորա ծանեայ. և որչափ ինչ ծանեայ բաւական է։ (Հ. Միք. Զամչ. առ Մելգոնեան, 1772 յունիս 13. Հալէպ)։

ՅԺ.

Ի 14 ամսոյն յուլիսի աստ ի գաւառն Բէմի, ձիւնեաց կէս խուլաժ բարձրութեամբ. և սառեցան եօթն մարդիկ, նաև ցորեանն՝ խոտն, և այլ բոյսք երկրի սառեցան։ (Հ. Սիմոն առ Մելգոնեան, 1772 յուլիս 31. [Պաշպալով?])։

ՅԺԱ.

Ի Նինուէ և ի մերտին և ի տիառպէքիր և յէնկուրի այնքան ուժգին և սաստիկ մահ՝ որ չիջոյց զբազում բազում տունս՝ մինչև չկարել միմեանց օգնել ի թաղումն։ Եւ պատրիարգն քաղթէացւոց փախուցեալ ի հալէպ, զի քաղթէացիք ունէին զինն քահանայս և ամենեքեան մեռան։ (Արանաս եպս. առ Հ. Մկրտիչ Անանեանց, 1772 Օգոստ. 17. [Կ. Պոլիս])։

ՅԺԲ.

Իսկէնտէր պէյն, որ է իսկական ժառանգ իշխանութեան Վրացւոց Թիֆլիզ քաղաքի, ի բազմաց հետէ եկեալ է ի չիրազ առ քէրիմխանն օգնութիւն առնուլ ի նմանէ, առ ի կորզել զԹիֆլիզ և զայլ տեղիս հայրենի ժառանգութեան իւրոյ ի ձեռաց հերակլի պատերազմաւ. և նա յապաղեցուցանէ։ Սա բազում անգամ ասացեալ է թէ ես ոչ գտի զոք քահանայ ինձ հաճոյ։ Իսկ ոմանք անմտածողք ասացեալ են, թէ կարես զայնպիսին գտանել ի պասրայ՝ այս անուն։ Եւ նորա զայս լուեալ՝ յորդորեալ է զբազումս զի գոնէ թուղթ մի գրեցից առ նա. և իմ լուեալ զայս՝ խորհրդով բարեկամաց՝ գրեցի առ նա թուղթ մի, զի թէպէտ ընդ իշխանաւորաց խառնիլն ոչ թուի ինձ բարի, բայց ի հեռուստ ևս բարեկամ ունիլ զայնպիսին, ոչ նուազ բարի է։ (Հ. Միք. Զամչ. առ Մելգոնեան, 1772. Օգոստ. 20. ի Պասրայ)։

ՅԺԳ.

Ցաւուրս յայսոսիկ ել եասախ սաստիկ ի թագաւորէն վասն ապաշուք և անպարկեշտ ֆութզից և անհեթեթ մեծութեան եախայից ֆէրաճէից. և ևս զի մի կարասցեն կապել յերեսս այն սատանայահնար ձևով զեմպիլ պիչիմի եազմախն, զոր նոր հնարեալ են առ ի կիսով չափ բաց թողուլ զերեսս. և զփէռչէմն՝ զոր այժմ կտրեն կանայք՝ ցուցանել մարդկանց. մանաւանդ այս եասախ եղև վասն տաճկաց և հոռոմց. և մասնաւորապէս վասն տաճկաց զի մի կարասցեն զգենուլ յօտար զոյն ֆէրաճէ, բայց եթէ կանանչ և ֆստիկ. և մասնաւորապէս վասն հայոց և հոռոմց՝ զի մի կապեսցեն ի գլուխս փոխանակ գունաւոր եէմէնիի՝ ճերմակ տիւլպէնտ և ճերմկեղէն, այլ գունաւոր ինչ. և զգեցցին մթագոյն ֆերաճէ։ Եւ այս հրաման այնքան սաստիկ՝ մինչև բազմաց եթէ հոռոմց